«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 6-Լ

ք. Երևան 08.07.2025թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության 63-րդ կետի դրույթներով, «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Կանոնադրության՝

1) 49-րդ կետը լրացնել նոր «5.1)» ենթակետով, հետևյալ բովանդակությամբ.

«5.1) քննարկում և որոշում է կայացնում՝ մարզական, ուսումնամարզական և մարզաառողջարարական խմբակներ կազմավորելու և դրանց գործունեության համար անհրաժեշտ վարձավճարի չափը սահմանելու մասին,»,

2) 69-րդ կետից հետո լրացնել նոր «69.1» կետ հետևյալ բովանդակությամբ.

«69.1 Ինստիտուտը որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնում է

1) Ինստիտուտին սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքի (դահլիճ, մարզադահլիճ, մարզասարք) վճարովի հիմունքներով կարճաժամկետ օգտագործման տրամադրման ծառայություններ,

2) վճարովի հիմունքներով մարզական, ուսումնամարզական և մարզաառողջարարական խմբակների կազմակերպում և գործունեության ապահովում:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 21-ից:

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՍՄԻԿ ԱՎԱԳՅԱՆ